# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՑՒԱՆՈ» (ՆԱՔԱՐԹՅԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 32 - 33 (16330) ՇԱԲԱԹ, 16 ՄԱՅԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂԻՆ ՎԵՐԱՓՈԽԵԾ ՎՐԱՍՏԱՆԸ»




*Մայիսի 14-15-ին Թբիլիսիում անցկացվեց Հարավային Կովկասի տարածաշրջանի մասշտաբով առաջին անգամ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) տնօրենների խորհրդի ամենամյա հանդիպումը:*

Միջոցառմանը մասնակցեցին ավելի քան 60 երկրների պատվիրակություններ, շուրջ 1500 գործարարներ: Մասնակիցների թվում էր Հայաստանի պատվիրակությունը՝ երկրի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանի գլխավորությամբ:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց եւ Վրաստանում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ մանրամասն հաշվետվությամբ ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

«Վրաստանը պահպանում է կայունությունը, տնտեսա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՅՑ

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մայիսի 11-ին պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում:*

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Քննարկումների գլավոր թեման Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրմանն առնչվող հարցերն էին:

Մասնավորապես, Գիորգի Մարգվելաշվիլու եւ հարեւանության եվրոպական քաղաքականության ու ընդլայնման շուրջ բանակցությունների գծով կոմիսար Յոհաննես Հանի հանդիպմանը, կողմերը քննարկեցին Եվրամիության հետ հարաբերությունները եւ ԵՄ-ի հետ Ասոցիացման մասին համաձայնագրի իրա-




գործման կարեւորությունը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԱՏԼԱՆՏՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



*Աշխատանքային այցով Թբիլիսիում է գտնվում Ատլանտյան խորհրդի պատվիրակությունը: Այցի շրջանակներում, պատվիրակության անդամների հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին:*

Վրաստանի խորհրդարանում կայացած հանդիպմանը, Դավիթ Ուսուփաշվիլին եւ Ատլանտյան խորհրդի անդամները քննարկեցին երկրում իրականացվող

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Մայիսի 15-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղաիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի նորացված կառավարության անդրանիկ նիստը:*

Նիստում վարչապետը մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց Թբիլիսիում անցկացված Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի տնօրենների խորհրդի նիստի աշխատանքի վերաբերյալ, խոսեց միջազգային նշանակության նման գագաթաժողովի շրջանակներում տեղի ունեցած

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵԾ ԱՅԾԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԸՆԹԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

*Եվրահանձնաժողովը հրապարակել է Վրաստանի կողմից Եվրամիության հետ այցեգրային պայմանակարգի ազատականացման հարցով ծրագրի կատարման երրորդ առաջընթաց վերլուծությունը:*

Հիշեցնենք, որ 2014 թվականի հոկտեմբերին Եվրամիության կողմից Վրաստանի համար բացված այցեգրային պայմանակարգի ազատականացման ծրագրի երկրորդ փուլը ներառում էր 15 հիմնական պահանջ: Ներկայումս հրապարակված վերլուծության մեջ վերոնշյալ 15 պահանջներից 7-ը համարվում է կատարված, 4-ը՝ գրեթե կատարված եւ 4-ը՝ մասնակի կատարված:

Հաշվետվության մեջ նշված է նաեւ, որ Վրաստանում իրակա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Մայիսի 9-ին, Մեծ հաղթանակի 70-ամյակի առթիվ, հանդիսավոր միջոցառումներ անցկացվեցին Թբիլիսիի Վակեի զբոսայգում:*



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու եւ այլ պաշտոնական անձանց ուղեկցությամբ, ծաղկեպսակ դրեցին Վակեի զբոսայգում Անհայտ զինվորի գերեզմանին:

Տոնի առթիվ, Վրաստանի նախագահը Երկրորդ աշխարհամարտի 12 վետերանների պարգեւատրեց «Պատվո նշան» շքանշանով:

Հիշեցնենք, որ ներկա դրությամբ Վրաստանում ապրում է Երկրորդ համաշխարհային պատերազմի շուրջ 1800 վետերան: Այս տարի երկրի կառավարությունը յուրաքանչյուր վետերանի 1000 լարի է հատկացրել՝ որպես միանվագ օգնություն, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 70-ամյակի կապակցությամբ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ՝ ԵՐԿՐԻ ՆՈՐԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 8-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ երկրի նորացված կառավարության գործունեության ծրագրի եւ կազմի քննարկմանը:*



Խորհրդարանի առջեւ կառավարության գործունեության ծրագրի եւ նախարարների կաբինետի նոր կազմի վերաբերյալ ելույթ ունեցավ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Ավելի քան 13 ժամ տեւած քննարկման արդյունքում, խորհրդարանի 150 պատգամավորներից կողմ է քվեարկել 87-ը, դեմ՝ 38-ը:

Հիշեցնենք, որ վարչապետի նախաձեռնությամբ երկրի կառավարության կազմում կատարվեցին որոշակի փոփոխություններ: Այսպես, պաշտպանության նախարարությունը գլխավորեց խորհրդարանի Եվրաինտեգրման հանձնաժողովի նախագահ Թի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ԱՎԱՐՏԻՆ Է ՄՈՏԵՆՈՒՄ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵԾՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ



*Մայիսի 14-ին Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան եւ կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն հանդիպումներ ունեցան մայրաքաղաքի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերանորոգման հիմնադրամի հոգաբարձական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանի հետ, ով, Եվրոպայի Վերակառուցման եւ զարգացման բանկի ամենամյա հանդիպման շրջանակներում, գտնվում էր Թբիլիսիում: Հանդիպումներին մասնակցեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:*

Հանդիպումներին կողմերը քննարկեցին Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման ավարտի եւ նորացված տաճարի, եկեղեցու բակի բարեկարգման, ինչպես նաեւ տոնական բացման միջոցառումների հարցերը: Հյուրերը երախտիքի խոսքեր ուղղեցին Վրաստանի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանդիպումների մասին:

Գործադիրն իր անդրանիկ նիստում ձեռնամուխ եղավ արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու կողմից ներկայացված երկրի դատախազության բարեփոխման օրինանախագծի քննարկմանը: Օրինանախագծի համաձայն, յուրովի է ներկայացվում դատախազության դերը կառավարական համակարգում: Օրինանախագիծը թույլ է տալիս առանց պարտադիր սահմանադրական փոփոխությունների իրականացնել դատախազության բարեփոխումը:

Կառավարության նիստում քննարկվեց եւ հավանության արժանացավ ՆԳ նախարար Վախթանգ Գոմելաուրու կողմից ներկայացված ՆԳՆ առանձին ստորաբաժանումների բաժանելու վերաբերյալ օրինանախագիծը: Օրինանախագծի համաձայն, կստեղծվի նոր ծառայություն՝ պետական անվտանգության ծառայությունը, որը կմիավորի հատուկ ծառայությունները հակահետախուզությունը, հակաահաբեկչական կենտրոնն ու հակակոռուպցիոն ծառայությունը:



ԱՅՑ

# ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հանդիպման ավարտից հետո, հրապարակված պաշտոնական հաղորդագրությունում նշվում է, որ առանձնակի ուշադրություն է դարձվել Եվրամիության հետ Վրաստանի Ասոցիացման համաձայնագրի ու ազատ առեւտրի խորը եւ համապարփակ գոտու համաձայնագրի իրագործմանը:

Վրաստանի եւ Եվրամիության հարաբերությունների հետ միասին, կողմերը քննարկել են Թբիլիսիի ակնկալիքները «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովից, որը մայիսի 21-22-ին տեղի է ունենալու Ռիգայում:

Այցի շրջանակներում, Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց «Արեւելյան գործընկերություն. ազատ ընտրության գործընկերություն» խորհրդաժողովին:

Բրյուսելում Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Բելգիայի Ֆիլիպ թագավորի, ինչպես նաեւ Եվրախորհրդարանի քաղաքական կուսակցությունների առաջնորդների հետ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԱՏԼԱՆՏՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բարեփոխումների, Վրաստանի եւ ողջ տարածաշրջանի անվտանգության, Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման, տնտեսական եւ ներդրումային նախագծերին առնչվող հարցեր: Հյուրերը նշեցին, որ Ատլանտյան խորհուրդը դրական է գնահատում Վրաստանում ընթացող քաղաքական գործընթացներն ու ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը: Իր հերթին, Դավիթ Ուսուփաշվիլին ընդգծեց խորհրդի կողմից մշակվող հաշվետվության եւ դրանում ներառված հանձնարարականների կարեւորությունը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ՝ ԵՐԿՐԻ ՆՈՐԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նա Խիդաշվիլին, Շրջակա միջավայրի պահպանության նախարարը գյուղատնտեսական հարցերով հանձնաժողովի ղեկավար Գիգլա Ագուլաշվիլին է, սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարը՝ Iberia ավտոմոբիլային հոլդինգի նախագահ Տարիել Խիչիկաշվիլին: Կաբինետի մյուս անդամները պահպանեցին իրենց դիրքերը (տե՛ս թերթի նախորդ համարը):

Կառավարության ծրագրի եւ կազմի քննարկմանը նախորդ իշխող կուսակցությունը՝ «Միասնական ազգային շարժում»-ը եւ դեռեւս «Վրացական երազանք» կոալիցիայի մաս հանդիսացող «Մեր Վրաստան-Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը քվեարկեցին նոր կառավարության ծրագրի դեմ՝ հայտարարելով, որ կառավարությունը կորցրել է ժողովրդի վստահությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ԱՎԱՐՏԻՆ Է ՄՈՏԵՆՈՒՄ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պետության եւ մասնավորապես երկրի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն, որի նախաձեռնությամբ էլ սկսվեց Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգումը:

Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան եւ կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն պատրաստակամություն հայտնեցին, էկոնոմիկայի եւ մշակույթի նախարարությունների հետ միասին, ակտիվ մասնակցություն ցուցաբերել բոլոր այն հարցերի կարգավորմանը, որոնք գործակալության առջեւ բարձրացվեցին հյուրերի կողմից:



*Նկարներում.- Դավիթ Նարմանիան եւ Ռուբեն Վարդանյանը Թբիլիսիի քաղաքապետարանում հանդիպման ժամանակ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԿԱՐԳԱՎՈՐՎԵԼ Է ԿԵՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

***Հայաստանի քաղաքացիների համար Վրաստանում կեցության թույլտվության հանձնման հետ կապված հիմնախնդիրը լուծվել է:***

Այդ մասին, հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարարության հանրային սպասարկումների զարգացման գործակալության Ախալքալաքիի բաժնի պետ Ռուբեն Պալյանը: Նա հիշեցրեց, որ դեռեւս 2014 թվականի սեպտեմբերի 1-ին Վրաստանում ուժի մեջ է մտել միաժամանակ վրացական եւ օտարերկրյա անձնագրերի շրջանառության արգելքի մասին օրենքը: «Անցած ժամանակահատվածում մարդկանց պարզաբանում-զգուշացնում էին հնարավոր հիմնախնդիրների վերաբերյալ: Արդարադատության նախարարությունը տեղերում կարողացավ լուծել ծագած հարցերը, եւ հետաձգվեց Հայաստանի քաղաքացիների համար կեցության վկայականի հանձնման ընթացակարգը»,- հավելեց Պալյանը:

Նշենք, որ 2014 թվականի սեպտեմբերից մինչ օրս Ջավախեթիի բնակիչներից կեցության վկայականի ստացման խնդրանքով ներկայացվել էր 3149 դիմում: 23 դիմում մերժվել է փաստաթղթերի հետ կապված հիմնախնդիրների եւ գործող օրենքների չիմացության պատճառով: Պալյանը հիշեցրեց, որ Ախալքալաքիում ծրագրվում է կառուցել արդարադատության նոր տուն, որը տարածաշրջանի բնակիչներին կազատի փաստաթղթերի հանձնման համար Թբիլիսի մեկնելու անհրաժեշտությունից:



## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑԱՎ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ 51 ՏՈԿՈՍԸ

*Մեծ Բրիտանիայում կայացած խորհրդարանական ընտրությունների վերջին տվյալներով, Պահպանողական կուսակցությունը Համայնքների պալատում ապահովել է մանդատների 51 տոկոսը: Գրավելով բրիտանական խորհրդարանի ստորին պալատի 650 տեղերից 331-ը՝ Դեյվիդ Քեմերոնն արդեն վերադարձել է Դաունինգ փողոց (ավելի քան 300 տարի այս փողոցում է տեղակայված Միացյալ Թագավորության նախարարների կաբինետի շենքը)՝ շարունակելու իր կառավարման երկրորդ շրջանը: Լեյբորիստների կուսակցությունը ստացել է 232 տեղ (30,5 տոկոս): Հաջորդը Շոտլանդական ազգային կուսակցությունն է՝ 56 տեղով, ապա գալիս են Լիբերալ դեմոկրատները եւ ժողովրդավարական ունիոնիստական կուսակցությունը՝ 8-ական տեղերով:*

## ՈՒԿՐԱԻՆԱ

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՆԲԱՍՈՒՄ

*Մայիսի 14-ին Դոնբասում աշխատանքն սկսեց Եվրամիության՝ իրադրության վերլուծության գնահատիչ առաքելությունը: Այդ մասին, ինչպես նշեցին Ուկրաինայի նախագահի մամլո ծառայությունում, խոսվել է Պյոտր Պորոշենկոյի եւ Եվրախորհրդի ղեկավար Դոնալդ Տուսկի միջեւ Ախենում կայացած հանդիպմանը:*

*ԵՄ-ին առընթեր Ուկրաինայի մշտական ներկայացուցիչ Կոնստանտին Ելիսեեւը ապրիլի 24-ին հայտարարել էր, որ Կիեւը Դոնբասի իրադրությունը բարելավելու համար անբավարար է համարում ԵԱՀԿ-ի դիտորդների ուժեղացումը: Մինչդեռ, ինչպես հայտնել է ԵԱՀԿ առաքելության փոխղեկավար Ալեքսանդր Հուգը, Դոնբասի հակամարտության կողմերը չեն ավարտել ծանր սպառազինության հետքաշումը շփման գծից:*

## ԵՎՐԱԳՈՏԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

*Եվրագոտու երկրների տնտեսությունն ընթացիկ տարվա առաջին եռամսյակում աճել է 0,4 տոկոսով. սա ամենաբարձր եռամսյակային ցուցանիշն է վերջին երկու տարում:*

*Հրապարակված տվյալները վկայում են, որ վերջին տարվա ընթացքում եվրագոտու երկրների տնտեսության աճն աստիճանաբար արագանում է: Ըստ որում, Գերմանիայի տնտեսության աճը չի արդարացրել վերլուծաբանների հույսերը. կանխատեսված 0,5 տոկոսի փոխարեն, Գերմանիայի տնտեսությունը 2015 թվականի առաջին երեք ամսում աճել է սոսկ 0,3 տոկոսով: 2015 թվականի առաջին եռամսյակում Ֆրանսիայի տնտեսությունը ցուցադրել է վերջին երկու տարում աճի ամենաբարձր տեմպերը: Ֆրանսիայի Վիճակագրության եւ տնտեսական հետազոտությունների ազգային ինստիտուտի տվյալների համաձայն, 2015 թվականի առաջին երեք ամսում աճը կազմել է 0,6 տոկոս:*

## ՆԵՊԱԼ

### ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Մայիսի 11-ին Նեպալում գրանցվեց 7,3 մագնիտուդով երկրորդ հզոր երկրաշարժը: Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում էր մայրաքաղաք Կատմանդուից 83 կիլոմետր արեւելք ընկած շրջանում, օջախը՝ 18,5 կմ խորության վրա: Այդ ցնցումից հետո, երկրի խորհրդարանը տարհանվել է: Արտակարգ իրավիճակների ազգային կենտրոնն իր հերթին ճշտում է, որ չի աշխատում նաեւ մայրաքաղաք Կատմանդուի օդանավակայանը:*

*Ոստիկանության տվյալներով, երկրաշարժի հետեւանքով զոհվել է 50 մարդ, տուժել է ավելի քան 150 բնակիչ:*

*Նշենք, որ ապրիլի 25-ին Նեպալում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի զոհ է դարձել 8 հազարից ավելի մարդ:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵԾ ԱՅԾԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նացված բարեփոխումների մանրամասը վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երկրում գործող համակարգերը, որոնք կապված են վերոնշյալ չորս փուլերի շրջանակներում օրենսդրական եւ պետական քաղաքականության ձեւավորման հետ, ինչպես նաեւ ինստիտուցիոնալ եւ կազմակերպչական բնույթի սկզբունքները, համապատասխանում են եվրոպական եւ միջազգային լավագույն չափորոշիչներին:

Այսպիսով, հանձնաժողովը գտնում է, որ Վրաստանը լրիվությամբ կատարել է այցեգրային պայմանակարգի ազատականացման երկրորդ փուլով նախատեսված միջոցառումները: Եզրակացությունում հանձնաժողովը նշում է, քանի որ Վրաստանը առաջադիմության է հասել ընդամենը մի քանի ամսվա ընթացքում, հանձնաժողովը պատրաստ է սահմանել հերթական հաշվետվության հրապարակման ամսաթիվն այն պայմանով, որ Վրաստանը կշարունակի կատարել ստանձնած պարտավորությունները վերոնշյալ տեմպերով:

Հաշվետվության մեջ սահմանված է նաեւ այն հանձնարարականները, որոնց կատարումը կգնահատվի որպես երկրորդ փուլի ավարտ:

Հիշեցնենք, որ եվրահանձնաժողովի հաջորդ հաշվետվությունը կհրապարակվի 2015 թվականի վերջին:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ



## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Մայիսի 11-12-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի՝ Եվրոպայի գործերով ավագ տնօրեն, ԱՄՆ-ի նախագահի հատուկ օգնական Չարլզ Կապչանը:*

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին անվտանգության հետ առնչվող հարցեր:

Կողմերն արծարծեցին Վրաստանի եւ ԱՄՆ-ի հարաբերությունների հարցերը, անդրադարձան Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրացման, ինչպես նաեւ «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովին նախապատրաստվելու հարցերին, որը մայիսի 21-22-ին տեղի է ունենալու Ռիգայում:

Հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց «Արժանի գործընկեր» (Nobel Partner) վրաց-ամերիկյան զորավարժությունների կարեւորությունը, որոնք մայիսի 11-ին մեկնարկել են Թբիլիսիի մերձակա Վազիանիի ռազմական օդանավակայանի տարածքում:

Ավելի վաղ, Վրաստանի ռազմական գերատեսչությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ վրաց-ամերիկյան զորավարժությունների նպատակը ՆԱՏՕ-ի արագ հակազդման ուժերին մասնակցությանը վրացական ստորաբաժանումների պատրաստության մակարդակի բարձրացումն է: Վարժանքներին մասնակցում է շուրջ 600 ամերիկացի եւ վրացի զինվորական: Հատուկ այդ վարժանքների համար, ավելի վաղ Վրաստան է փոխադրվել ամերիկյան ծանր ռազմական տեխնիկա՝ հետեւակի «Բրեդլի» 14 մարտական մեքենա, լոգիստիկայի ապահովման մեքենաներ, ինչպես նաեւ զորավարժությունների համար նախատեսված հանդերձանք: Վարժանքները պետք է ավարտվեն մայիսի 25-ին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ



***Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին տնտեսական աճի կանխագծումների փոփոխման պայմաններում չի բացառում պետական բյուջեի վերանայման հավանականությունը:***

«Մեր ազգային տարադրամի արժեզրկումը լուրջ հիմնախնդիր է, եւ այն ծագել է արտաքին գործոնների ազդեցության ներքո»,- հայտարարեց Նոդար Խադուրին եւ հավելեց, որ կառավարությունը հույս ունի, որ մոտ ժամանակներս լարին ոչ միայն կկայունանա, այլեւ կամրապնդվի:

«Ցանկանում եմ դիմել փորձագետներին, որ խուսափեն բացահայտորեն չհիմնավորված եւ չփաստավորված գնահատումներից: Վրաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ ամեն ինչ անում է լարիի կուրսի կայունացման համար»,- նշեց նախարարը:

Նոդար Խադուրու խոսքերով, տարադրամի փոխարժեքի վրա, տնտեսական գործոններից բացի, ազդում են նաեւ հոգեբանական գործոնները:

Անդրադառնալով բյուջեի վերանայման հնարավորությանը՝ ֆինանսների նախարարը նշեց. «Դեռեւս փետրվարին մենք խոսում էինք բյուջեի հնարավոր փոփոխությունների մասին: Դեռեւս բյուջեն կատարվում է գերազանցումով, թեպետ տնտեսական գործընթացները մեզ ստիպում են վերանայել կանխագծումները: Եթե կանխագծումները պաշտոնապես փոփոխվեն, այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, կվերանայվի նաեւ բյուջեն: Թեպետ, դա հնարավոր է՝ չանդրադառնա ծախսերի հոդվածի վրա: Վստահությամբ կարող եմ ասել, որ հիմնարար եւ սոցիալական ծախսերը չեն կրճատվի»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

ԴՊՐՈՑ

## ՄԵԿՆԱՐԿԵԾ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



***Մայիսի 15-ից մինչեւ հունիսի 9-ը, երկրի ողջ մասշտաբով, ընթացքի մեջ կլինի 2015-2016 ուսումնական տարվա համար հանրային բոլոր դպրոցներում առաջին դասարանցիների էլեկտրոնային համընդհանուր գրանցումը:***

Ինչպես նշեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, գրանցումը կանցկացվի նախարարության ու կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կայք-էջերում: Նախարարությունը զգուշացնում է, որ զուգահեռ կարգով միեւնույն երեխայի գրանցումը կարող է առաջացնել տեխնիկական բարդություններ: «Հանրային ուսումնական հաստատությունում առաջին դասարանցիների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման համար տրված է հունիսի 11-ից մինչեւ հունիսի 21-ը ժամանակահատվածը: Գրանցումը կանցնեն միայն այն երեխաները, ովքեր բավարարում են օրենքով սահմանված տարիքային պահանջին»,- ասված է նախարարության պաշտոնական կայքում:

Համաձայն այդ օրենքի, Վրաստանի հանրային դպրոցներում կգրանցվեն այն երեխաները, ովքեր ուսումնական տարվա սկզբին՝ մինչեւ սեպտեմբերի 14-ը, կդառնան վեց տարեկան:

Նշենք, որ դեռեւս ապրիլին Վրաստանի խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ մերժեց «Ազգային շարժման» կողմից նախաձեռնած օրինանախագիծը, ըստ որի, առաջին դասարան կարող են գնալ այն երեխաները, ում վեց տարին կլրանա մինչեւ 2015 թվականի վերջը: Ավելացնենք, որ առաջին դասարանցիների տարիքային թեմայով քննարկումները շարունակվում են մի քանի տարի: Միխեիլ Սաակաշվիլու նախագահության օրոք, կրթության նախարարության որոշմամբ, 2010 թվականից դպրոցներ կարող էին ընդունել հինգ տարին լրացած երեխաները: Սույն նախաձեռնությունը դրականապես գնահատվեց առանձին ծնողների կողմից, որոնք իրենց կարծիքը հիմնավորում էին նրանով, որ 2008 թվականից Վրաստանի հանրային դպրոցներն անցել էին 12-ամյա ուսուցման: Վերոնշյալ հարցը վերանայվեց 2012 թվականին, իշխանափոխությունից հետո:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍԿԱՅՊՈՎ

Սահմանափակ հնարավորություններով անձինք հետայսու կարող են օգտվել Վրաստանի պետական սպասարկումների զարգացման գործակալության տարածքային սպասարկման 31 պետական սպասարկումներից: Նրանց վերապահվում է առավոտյան ժամը 9-ից մինչեւ ժամը 21-ը կենսաչափական անձնագրի, ծննդյան, ամուսնության, ապահարզանի, որդեգրման, հայրության հաստատման, անունը կամ ազգանունը փոխելու եւ այլ վկայականների համար հայց ներկայացնելու հնարավորություն: Անհրաժեշտության դեպքում, խորհրդատվություններ կարող են ստանալ sda.ge կայքի միջոցով: Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք կարող են կապվել տարածքային սպասարկման ծառայության հետ եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալ ժեստերի լեզվով:

Ավելի վաղ, նման ծառայություն է ստեղծվել Վրաստանի ՆԳ անհետաձգելի օգնության օպերատիվ վարչության կողմից «112» հեռախոսահամարով: Գործում էր նաեւ խուլուհամրերի համար SMS-ի միջոցով փրկարարների կանչի ծառայությունը: ՆԳՆ հոգաց նաեւ կույրերի հարցում՝ ստեղծելով www.voice.police.ge կայք-էջը:



### ԱՎՍՏՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԺԱՄԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ

*Ավստրիայի նախագահ Հայնց Ֆիշերը, առաջին տիկնոջ՝ Մարգիտ Ֆիշերի ուղեկցությամբ, մայիսի 18-ին, երկօրյա պետական այցով, կժամանի Վրաստան: Դիմավորման պաշտոնական արարողությունը տեղի կունենա Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում: «Դեմառդեմ», ինչպես նաեւ ընդլայնված ձեւաչափով հանդիպումից հետո, կկայանա երկու երկրների նախագահների համատեղ մամուլի ասուլիսը:*

*Վրաստան Ֆիշերի այցի շրջանակներում նաեւ հանդիպումներ են պլանավորված գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:*

*Նշենք, որ Ավստրիայի կողմից Վրաստան նման մակարդակի այցեր դեռեւս չեն եղել:*

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՍԿՍՎԵՆ ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ

*Վրաստանի հանրային դպրոցներում ավարտական քննությունները կսկսվեն մայիսի 21-ին: Ավարատկան դասարանի երեխաները քննությունները կհանձնեն մայիսի 21-25-ին:*

*Ինչպես հայտարարեց գնահատման եւ քննությունների կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, մայիսի 20-ը կհամարվի նախապատրաստման օր, եւ աշակերտները կստանան թեստային առաջադրանքների հետ ծանոթանալու ու ծրագրերի աշխատանքը ստուգելու հնարավորություն:*

### ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է «ԴԵՄՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԸ» ՆԱԽԱԳԻԾԸ

*Թբիլիսիի միջազգային մամլո կենտրոնում, անցկացվեց «Դեմքով անօթեւանների կողմը» սոցիալական նախագծի շնորհանդեսը: Այն իրականացնում է «Զբաղվածության համար գործազուրկների միություն» ոչ կառավարական կազմակերպությունը, Ռոզա Լյուքսեմբուրգի (Գերմանիա) հիմնադրամի մոսկովյան բաժանմունքի եւ Թբիլիսիի սակրեբուլոյի աջակցությամբ:*

*Նախագծի գլխավոր նպատակն է պետական մակարդակով իրականացնել անօթեւաններին լիարժեք օգնություն ցուցաբերելու գործընթացը: Առաջին քայլը անօթեւան մնացած ընտանիքների իրական թվաքանակի հստակեցումն է եւ Թբիլիսիի մասշտաբով տվյալների համապատասխան բազայի ստեղծումը:*

*Հիշեցնենք, որ Վրաստանը՝ որպես երկիր, որը 2005 թվականին վավերացրել է եվրոպական սոցիալական խարտիան, պարտավոր է միջոցներ ձեռնարկել այդ խմբի քաղաքացիների համար սոցիալական բնակտարածքով ապահովելու ուղղությամբ:*

### ՀՐԴԵՀ ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ. ԶՈՀՎԵՑ ԵՐԵՔ ԵՐԵԽԱ

*Հանգստավայր Քոբուլեթիի «Արմազի» հյուրանոցում, մայիսի 10-ին տեղի ունեցած խոշոր հրդեհի հետեւանքով, երեք երեխա է զոհվել:*

*Հրդեհվող շինությունից 45 մարդ է տարհանվել, այդ թվում՝ 31 երեխա: Հրդեհի պատճառները ճշտվում են: Նախնական տեղեկությունների համաձայն, զոհերը գտնվել են այն համարում, որից սկսվել է հրդեհը:*

*Բոլոր երեխաները Ռուսթավիից ժամանած երգչախմբի անդամներ էին: Նրանք Քոբուլեթի էին եկել համերգային շրջագայության շրջանակներում:*

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ցավակցություն են հայտնել զոհված երեխաների ծնողներին: Հրդեհի բռնկման հարցով հարուցվել է քրեական գործ:*

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂԻՆ ՎԵՐԱՓՈԽԵՑ ՎՐԱՍՏԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան աճի միտումը, նշանակալիորեն բարելավվել է բիզնես միջավայրը»,- իր ելույթում հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ տարածաշրջանում ստեղծված քաղաքական-տնտեսական բարդ իրավիճակն ազդեցություն է գործում նաեւ Վրաստանի վրա: «Վրաստանը հանդիսանում է առավել զարգացած եւ միաժամանակ ամենապարզ հարկային համակարգով ու նվազ հարկերով երկիր»,- հայտարարեց վարչապետը: Նա հանդիպման մասնակիցների ուշադրությունը բեւեռեց Վրաստանում գործարարության իրականացման դյուրացված ընթացակարգի վրա: «Անցյալ տարի մենք Եվրամիության հետ ստորագրեցինք Ասոցիացման համաձայնագիրը, ինչը եվրաինտեգրմանն ուղղված նշանակալից քայլ էր: Սույն համաձայնագիրը ստեղծում է ազատ առեւտրի խոր եւ համընդհանուր տարածք, ինչը ստեղծում է ներդրումների ու տնտեսական աճի բազում հնարավորություններ: Մեր նպատակն է գործարարության աջակցության ու մասնավոր հատվածի նկատմամբ նպաստել երկրի տնտեսական աճին ու կենսամակարդակի բարձրացմանը»,- հայտարարեց վարչապետը, եւ հավելեց, որ տարածաշրջանում աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը բացասական ազդեցություն է գործում երկրի տնտեսական զարգացման վրա, թեպետ Վրաստանը պահպանում է տնտեսական աճի միտումը, շարունակում է բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները ինչպես մասնավոր սեփականության պաշտպանության, այնպես էլ՝ հարկային բեռի ու հարկային օրենսդրության օպտիմալացման ուղղությամբ: «Վրաստանն այդ առումով լրիվությամբ բաց երկիր է՝ հարկային հստակ համակարգով ու ցածր հարկերով:

Անդրադառնալով երկրում իրականացվող բարեփոխումների թեմային՝ վարչապետը նշեց. «Չնայած նշանակալի ձեռքբերումներին, մենք տրամադրված ենք շարունակել բարեփոխումները, որպեսզի համապատասխանեցվի Ասոցիացման համաձայնագրի պահանջներին եւ արագացվի տնտեսական աճը»,- ընդգծեց վարչապետը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՀԻՄՆՈՒՄ ԵՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

*Մայիսի 12-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) նախագահ Սումա Չակրաբարտին:*



Բանկի տարեկան հանդիպման եւ գործարար համաժողովի շրջանակներում իրականացված այցի ընթացքում, EBRD նախագահը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ֆինանսների նախարար Նոդար Խադուրու, գործադիր իշխանության մյուս ներկայացուցիչների հետ:

Մայիսի 12-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) նախագահ Սումա Չակրաբարտին ստորագրեցին Վրաստանի կառավարության ու բանկի կողմից ներդրողների խորհրդի ստեղծման մասին հուշագիրը: Հուշագրի համաձայն, կողմերը համատեղ աշխատանք են իրականացնելու ներդրումների գրավման եւ բիզնես մթնոլորտի բարելավման ուղղությամբ:

Հուշագրի ստորագրումից հետո անցկացված մամլո ասուլիսում, մայիսի 12-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի (EBRD) նախագահ Սումա Չակրաբարտին ստորագրեցին Վրաստանի կառավարության եւ բանկի կողմից ներդրողների խորհրդի ստեղծման մասին հուշագիրը: Հուշագրի համաձայն, կողմերը համատեղ աշխատանք են իրականացնելու ներդրումների գրավման եւ բիզնես մթնոլորտի բարելավման ուղղությամբ: Նախագահը հայտարարեց, որ Վրաստանի տնտեսական դրությունը բավականին բարդ է, բայց միեւնույն ժամանակ՝ նաեւ շտկելի:

«Վրաստանի տնտեսական դրությունը բարդ է, բայց շտկելի: Տնտեսական աճը դանդաղել է, ինչը պայմանավորված է Ռուսաստանի տնտեսական իրադրությամբ: Մենք տեսնում ենք, որ այս երկիրը ներուժ ունի: Հենց դրա համար էլ մենք տարածաշրջանում ամենից ավելի ներդրումներն իրականացնում ենք Վրաստանում: Կարծում եմ՝ ազգային բանկն ու կառավարությունը կկարողանան շտկել իրադրությունը»,- հայտարարեց Սումա Չակրաբարտին եւ հավելեց, որ շաբաթվա վերջին EBRD-ը կներկայացնի իր կանխատեսումը երկրի տնտեսական աճի վերաբերյալ: Նրա խոսքով, ենթադրվում է, որ 2015 թվականի համար կանխատեսումը կլինի նույնը, ինչ եւ ընթացիկ տարվա հունվարին՝ 4,2 տոկոս:

ՀԱՐՑՈՒՄ

## ՎԱՐԿԱՆԻՇԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻ՞

*Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային դեմոկրատական ինստիտուտը (NDI) Շվեդիայի միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, մարտի 17-ից մինչեւ ապրիլի 19-ը, Վրաստանի ողջ մասշտաբով, տարբեր թեմաներով անցկացրեց հարցում: Կովկասի հետազոտական ռեսուրսների կենտրոնի (CRRC) անցկացրած ուղղակի հարցման եղանակով հետազոտությանը մասնակցեց երկրի 4360 քաղաքացի: Գործակալության հավաստմամբ, վիճակագրական սխալանքը կազմել է 2,3 տոկոս:*

NATIONAL DEMOCRATIC INSTITUTE FOR INTERNATIONAL AFFAIRS

Որոշ վերապահումներով, հարցման արդյունքների հանրագումարման արդյունքում ստացվում է բավականին հետաքրքիր պատկեր: Այսպես, հարցման համաձայն, «Վրացական երազանք» իշխող կոալիցիայի վարկանիշը 2014 թվականի վերջից ընկել է ավելի քան երկու անգամ: Հիշեցնենք, որ կոալիցիայի վարկանիշը, որը 2012 թվականի հոկտեմբերին հաղթեց խորհրդարանական ընտրություններում, 2013 թվականի սկզբին կազմում էր 60 տոկոս, հուլիսին իջավ մինչեւ 52 տոկոս, 2014 թվականի վերջին՝ մինչեւ 50 տոկոս:

Հարցման տվյալներով, եթե վաղը կայանային խորհրդարանական ընտրություններ, ապա «Վրացական երազանքի» օգտին կքվեարկեր հարցվածների 24 տոկոսը, ամենուժեղ ընդդիմադիր կուսակցության՝ «Միասնական ազգային շարժման» օգտին՝ 12 տոկոսը: 27 տոկոսը չգիտի՝ ում կաջակցի, 56 տոկոսը պատրաստ է մասնակցել խորհրդարանական ընտրություններին, իսկ 46 տոկոսը չէր գնա ընտրություններին:

2009 թվականից ի վեր, առաջին անգամ հարցման արդյունքներով, բացահայտվեց երկրի զարգացման կուրսից դժգոհների բարձր ցուցանիշը՝ 37 տոկոս: Վրաստանում NDI-ի տնօրեն Լորա Տորնտոնի խոսքով, «առաջին անգամ բնակչության մեծ մասը հայտարարում է, որ երկիրը զարգանում է ոչ ճիշտ ուղղությամբ, եւ դա կապված է տնտեսական դրության հետ»:

Կազմակերպությունների առաջին եռյակում, որոնց գործունեությունը դրական է գնահատվում, տեղ են գտել Վրաց ուղղափառ եկեղեցին (43 տոկոս), երկրի բանակը (43 տոկոս) եւ Արդարադատության տունը (31 տոկոս): Նախարարություններից Վրաստանի բնակչությունն առավել դրական է գնահատում առողջապահության նախարարության գործունեությունը, ամենավատը՝ ֆինանսների նախարարության աշխատանքը:

Ինչ վերաբերում է կոնկրետ քաղաքական գործիչների գործունեության գնահատմանը, ապա ԱՄՆ-ի Ազգային դեմոկրատական ինստիտուտի (NDI) կողմից անցկացված հարցման համաձայն, Վրաստանի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը «միջին» գնահատական է տալիս երկրի նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի խոսնակի գործունեությանը:

Հարցվածների 3 տոկոսն այն կարծիքին է, որ նախագահը «շատ լավ» է աշխատում, 16 տոկոսի կարծիքով՝ «լավ», 54 տոկոսը Մարգվելաշվիլու գործունեությունը գնահատում է «միջին», 13 տոկոսը՝ «վատ», 3 տոկոսը՝ «շատ վատ», իսկ մնացածը կամ չգիտեն հարցի պատասխանը, կամ հրաժարվում են կոնկրետացնել այն:

Ինչ վերաբերում է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն, ապա հարցվածների 2 տոկոսը նրա գործունեությունը գնահատում է «շատ լավ», 14 տոկոսը՝ «լավ», 52 տոկոսը՝ «միջին», 16 տոկոսը՝ «վատ», 5 տոկոսը՝ «շատ վատ»:

Խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու վարկանիշը հետեւյալ պատկերն ունի. 1 տոկոսը նրա գործունեությունը գնահատում է «շատ լավ», 17 տոկոսը՝ «լավ», 51 տոկոսը «միջին», 13 տոկոսը՝ «վատ», 2 տոկոսը՝ «շատ վատ»:

Հարցումը բացահայտեց եւս մի հետաքրքիր հանգամանք: Հարցման մասնակիցների մեծամասնությունն այն կարծիքին է, որ Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին է երկրում ընդունում քաղաքական որոշումները: Այս կարծիքին է հարցվածների 59 տոկոսը: Հարցվածների 14 տոկոսը գտնում է, որ Իվանիշվիլին վարչապետի պաշտոնը թողնելուց հետո, չի միջամտում իշխանության գործունեությանը, իսկ 21 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին:

Միաժամանակ, հարցման մասնակիցների 41 տոկոսն անցանկալի է համարում Բիձինա Իվանիշվիլու մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին, 40 տոկոսը, ընդհակառակը, ցանկանում է, որ Իվանիշվիլին քաղաքական պաշտոն զբաղեցնի եւ մասնակցի քաղաքական որոշումների ընդունմանը: Միայն 6 տոկոսն է գտնում, որ Իվանիշվիլին, չզբաղեցնելով քաղաքական պաշտոն, մասնակցի քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

Ինչ վերաբերում է երկրի բնակչությանը հետաքրքրող հրատապ թեմաներին, ապա, NDI-ի հարցման համաձայն, մարդկանց մեծ մասը «ամենակարեւոր ազգային հարցերը» առնչում է սոցիալականին՝ աշխատատեղեր, գնաճ, աղքատություն:

Այսպես, ամենակարեւոր ազգային հարցը աշխատատեղերն են, հայտարարել է հարցման մասնակիցների 66 տոկոսը, գնաճը՝ 43 տոկոսը, իսկ աղքատությունը՝ 39 տոկոսը: Երկրի տարածքային ամբողջականության հարցը հայտնվել է չորրորդ տեղում՝ 27 տոկոս: Թոշակները կարեւոր են հարցվածների 21 տոկոսի համար, աշխատավարձերը՝ 17 տոկոսի, մատչելի առողջապահությունը՝ 17 տոկոսի, Ռուսաստանի հետ հարաբերությունները՝ 12 տոկոսի համար:

Մեկնաբանելով հարցման տվյալները՝ Վրաստանում NDI-ի գրասենյակի տնօրեն Լորա Տորնտոնը նշեց. «Մեր ուսումնասիրության համաձայն, առաջին անգամ տարածքային ամբողջականությունը չի հայտնվել ամենակարեւոր ազգային հարցերի առաջին եռյակում, ինչը նշանակում է, որ այն հետ են մղել տնտեսական հարցերը, եւ դա կարեւոր ուղերձ է այն անձանց համար, ովքեր որոշումներ են ընդունում»:

Հիշեցնենք, որ նախորդ հարցման ժամանակ, որի արդյունքները հրապարակվել էին 2014 թվականի օգոստոսին, ազգային շահերը հետեւյալն էին՝ աշխատատեղեր՝ 63 տոկոս, աղքատություն՝ 32 տոկոս, տարածքային ամբողջականություն՝ 30 տոկոս, թոշակներ՝ 25 տոկոս եւ այլն:

«Վրաստանի հանրային տրամադրություն» սոցիոլոգիական հետազոտությունը Վրաստանի ամբողջ տարածքում անցկացվել է ընթացիկ տարվա մարտի 27-ից մինչեւ ապրիլի 19-ը: Հարցմանը մասնակցել է 4 հազար 360 մարդ: Վիճակագրական սխալանքը կազմում է 2,3 տոկոս:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է

*Աշխարհում փոքր եւ միջին գործարարությունը հանդիսանում է բիզնես ուղղությունների ամենահեռանկարայինը: Չնայած, որ Եվրոպայում եւ ԱՄՆ-ում փոքր եւ միջին գործարարության բաժինը կազմում է ընդհանուր էկոնոմիկայի 70-80 տոկոսը, Վրաստանում այդ ցուցանիշը 20 տոկոսը չի գերազանցում:*

Վրաստանում փոքր եւ միջին գործարարության զարգացման արգելակիչ լուրջ հիմնախնդիրներից մեկը համապատասխան իմացության եւ նրբությունների անբավարարությունն է, ֆինանսական մատչելիության նվազ մակարդակը: Ինչպես նշեց փոքր եւ միջին գործարարության ասոցիացիայի ղեկավար Միխեիլ Ճելիձեն, գործնականում ֆինանսները ձեռներեցների համար անմատչելի են, քանզի բանկերը խուսափում են նրանց վարկավորել:

«Բանկերն առանց երաշխիքների չեն ֆինանսավորում փոքր եւ միջին գործարարությանը, քանի որ նման գործարարությամբ զբաղվող ձեռներեցների մեծամասնությունը չունի համապատասխան գույքը գրավադրման համար»,- հայտարարեց նա:

Նրա խոսքերով, լուրջ հիմնախնդիր է նաեւ համապատասխան իմացության անբավարարությունը: «Հաճախ ձեռներեցներն աշխատանքն սկսում են առանց համապատասխան բիզնես պլանի, ռիսկերի հաշվարկման, ինչը արգելակում է ֆինանսներով աշխատանքի ապահովման գործընթացը: Ձեռներեցների մոտ բացակայում է նաեւ հեռանկարային հաշվարկումների իրականացումը: Մասնավորապես, նրանք հաշվի չեն առնում դոլարի կուրսի փոփոխման հավանականությունը»,- հայտարարեց Միխեիլ Ճելիձեն: Նրա հետ համամիտ է Վրաստանի բանկերի ասոցիացիայի ղեկավար Զուրաբ Գվասալիան: Վերջինիս խոսքերով, շատ գործարարներ ընդհանրապես պատկերացում չունեն, թե ինչու են վերցնում վարկը, եւ ինչ ռիսկեր են կապված դրա հետ: «Բանկից մերժում ստանալու դեպքում, շատ գործարարներ դիմում են վաշխառուներին եւ բարձր տոկոսով գումար վերցնում: Նրանք չեն գիտակցում, որ պարզաբանեն բանկից ստացած մերժման պատճառը եւ վերանայեն իրենց ծրագրերը»,- հայտարարեց Գվասալիան:

Նրա խոսքերով, համապատասխան իմացության բացակայությամբ էր պայմանավորված իրենց ասոցիացիայի կողմից իրականացված նախագիծը, որի շրջանակներում հավանական վարկատուների համար անցկացվեցին վարժանքներ, որտեղ մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց վարկերի մասին: «Իրականացված նախագիծը դրական արդյունքների հանգեցրեց, հետեւաբար, պետական կառույցները եւ ոչ կառավարական կազմակերպություններն այդ ուղղությամբ պետք է շարունակեն աշխատանքը»,- հայտարարեց Զուրաբ Գվասալիան:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*